

ԽՍՔԱՑԱԿԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆ ԱՆՑԱՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՄԲ

«Պատրաստ եմք առնել խաղաղութիւն մեծ»
(Ա Մակ. ԺԳ 37)

Միացյալ Ազգերի Կազմակերպությունը 1986 թվականը հայտարարել էր Խաղաղության տարի: Նման վճիռը գոհունակությամբ ընդունվեց աշխարհի բոլոր ժողովուրդների կողմից, որովհետև եթե մի կողմից հետևեմ կուտակվում էր համաշխարհային աղետի սպառնալիքը, ապա մյուս կողմից Սովետա-Ամերիկյան բարձր մակարդակի ժնևյան հանդիպումը ամրակայում էր մարդկության հույսը, որ բանակցությունների ճանապարհով հնարավոր կլինի աշխարհն ազատել միջուկային առճակատումի վտանգից: Թեև 1986 թվականին աշխարհի զանազան մասերում շարունակվեցին տեղային բնույթ կրող ընդհարումները, սակայն խաղաղության տարին հատկանշվեց իսկապես խաղաղասիրական ուժերի եռանդուն և արդյունավետ գործունեությամբ: Հատկապես Սովետական Միությունը հետևողականորեն շարունակեց միջուկային զենքերի փորձարկման և միջուկային պայթեցումների դադարեցումը՝ համայն աշխարհին հավաստելով իր բարի կամքը՝ աստվածապարգև կյանքը վտանգից վերծ պահել և մարդկության համար ապահովել խաղաղ զարգացման հեռանկարներ: Սովետական Միության խաղաղասիրական ջանքերը արտահայտվեցին բազմաթիվ գործողություններով միջազգային ասպարեզում, ընդհուպ մինչև Ռեյկյավիկ և Հնդկաստան: Հուսադրիչ է և այն, որ խաղաղասիրական զանգվածային ցույցեր և երթեր կազմակերպվեցին քաղաքակիրթ աշխարհի մեծ մասում՝ արտահայտելով ժողովուրդների միասնական կամքը պատերազմի դեմ, հանուն մարդկային քաղաքակրթության և մարդու գոյության: Ի հեճուկս տարընթաց ուժերի, այս բոլոր ջանքերը արդյունավորվեցին և խաղաղության տարին անցավ խաղաղությամբ:

Աշխարհի խաղաղության ի խնդիր ջանքերին մասնակից եղավ նաև Քրիստոսի Եկեղեցին: «Յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն» աստվածային պատգամը իրագործելու համար աշխարհ եկած մարդացյալ Աստվածորդու վարդապետության հիմքն էր խաղաղությունը՝ համամարդկային սիրո տեսիլքով: Քրիստոս այդ խաղաղության վրա հիմնեց իր Եկեղեցին, որպեսզի Եկեղեցին Քրիստոսով դառնա խաղաղության վահանն ու ապավենը. «Զի ոչ եթէ խռովութեան է Աստուած, այլ՝ խաղաղութեան» (Ա Կորնթ. ԺԴ 33):

1986 թվականին Քրիստոսի Եկեղեցին իր բոլոր հարանվանություններով խաղաղություն և եղբայրություն քարոզեց: Գումարվեցին միջեկեղեցական խաղաղասիրական ժողովներ, կոչեր հղվեցին աշխարհի բոլոր պետությունների ղեկավարներին՝ Սովետական Միության մեջ գործող Եկեղեցիների և այլ կրոնական կազմակերպությունների պետերի և ներկայացուցիչների համաժողովների կողմից, Եվրոպայում և Ամերիկայում գործող Եկեղեցիների կողմից:

Բնականաբար ազգերի ու պետությունների, Քրիստոսի Եկեղեցու խաղաղասիրական գործունեությունից անմասն չէր կարող մնալ Հայաստանյայց Առաքելական Ուղղա-

փառ Եկեղեցին՝ ի գլուխ ունենալով Ամենայն Հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Հայ Եկեղեցին դարավոր իր գոյությամբ մշտակա խաղաղարար դեր է կատարել հայ ժողովրդի և հարևան երկրների ժողովուրդների փոխհարաբերությունների պատմական ճանապարհին: Այն միշտ մնացել է խաղաղության պաշտպանն ու ջատագովը՝ ժողովուրդը ազատելու եղբայրասպան կռիվներից ու օտարների պատճառած արյունահեղությունից, սակայն ճակատագրական պահերին միշտ կանգնել է սեփական ժողովրդի կողքին՝ Ավարայրից մինչև Սարդարապատ:

Այսօր նույնպես, և թերևս առավել քան երբեք, հայ ժողովուրդը կարիք ունի խաղաղության. առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կազմակերպվեց քսաներորդ դարի առաջին մեծ ոճիրը՝ արևմտահայության ծրագրված ցեղասպանությունը, երբ մեր ժողովրդի կեսից ավելին զոհ դարձավ երիտթուրքական քաղաքական շահերին: Այսօր էլ աշխարհով մեկ սփռված հայությունը անմեղ զոհեր է տալիս Լիբանանում, Իրանում, Իրաքում և այլուր:

Իսկ եթե այսօր Խորհրդային Հայաստանը խաղաղ է, ապահով և անվտանգ՝ անառիկ սահմանով և բազմազգ ժողովուրդների եղբայրությամբ, ապա պետք է առավել ջանք ու եռանդ ցուցաբերել՝ ձայնակցելու խաղաղության կոչերին:

Ահա թե ինչու «արդար և իրավ» է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հարատև ու հետևողական ջանքը հանուն խաղաղության: Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Քահանայապետին հղած իր ուղերձում Վեհափառ Հայրապետը գրում էր. «Իրոք այս տագնապալի ժամանակներին մեր հոգևորականներիս ամենասեպուհ պարտականությունն է աղոթել ու գործել ի խնդիր աշխարհի մեծ ու փոքր ազգությունների խաղաղ գոյակցության: ...Ես համոզված եմ, որ բոլոր դեպքերում արդարությունը հետայսու միայն խաղաղությամբ կարելի կլինի իրականացնել: Ամեն տեսակ վերքեր կարելի պիտի լինի բուժել խաղաղ հոգու բալասանով: Ամեն տեսակ հարցեր արդարությամբ լուծելու հպորագույն կենքը՝ դա խաղաղության կենքն է:

Ավելի քան երբեք այժմեական է Հակոբոս առաքյալի խուքը՝

«Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն» (Հակոբոս առաքյալ Գ 18)»:

Խաղաղության տարին անցավ: Բայց և համաշխարհային աղետի արհավիրքը վերաճում է՝ աստղային պատերազմի ծրագրումով, որ սպառնում է դառնալ տիեզերակործան: Ուստի որպեսզի հետագա սերունդները չասեն «Ի ժամանակին յայնմիկ ոչ գոյր խաղաղութիւն» (Բ Մնաց. ԺԵ 5), պետք է պատրաստ լինել «առնել խաղաղութիւն մեծ», որպեսզի ամբողջ աշխարհով մեկ «խորհուրդ խաղաղութեան եղիցի» (Զաքար. Զ 13):